

Վարկային պատմության էություն և կարևորություն

Վարկային պատմությունն իրենից ներկայացնում է տվյալ անձի վարկային վարքագիծը՝ գործող և մարված վարկերի, տվյալ անձի կողմից տրված երաշխավորությունների գծով: Այն պարունակում է տեղեկատվություն անձի կողմից ստանձնած ֆինանսական պարտավորությունների չափի, ֆինանսական պարտավորություններ ստանձնելու պարբերականության և վերջիններիս վճարումների իրականացման ժամկետների վերաբերյալ:

Նախկինում ձևավորված վարկային պատմությունը կարևոր դեր է խաղում լիզինգի տրամադրման վերաբերյալ որոշման կայացման հարցում, մասնավորապես, դրական վարկային պատմություն ունենալը կարող է նպաստել վարկավորման վերաբերյալ դրական որոշում կայացնելուն, իսկ վատ վարկային պատմությունը կարող է հիմք հանդիսանալ նոր լիզինգի հայտի մերժման կամ առավել խիստ պայմաններով դիտարկման համար:

Դրական վարկային պատմություն հնարավոր է ձևավորել վարկային պարտավորությունները ժամանակին կատարելու, կարճ ժամանակահատվածում հաճախ նոր վարկի ստացման դիմումներ չներկայացնելու միջոցով:

Եթե, այնուամենայնիվ, Դուք ունեք վատ վարկային պատմություն, ապա վերջինս բարելավելու համար անհրաժեշտ է առաջին իսկ հնարավորության դեպքում վերացնել դրա հիմնական պատճառները՝ մարել գործող ժամկետանց պարտավորությունները, թեթևացնել վարկային ծանրաբեռնվածությունը, հերթական մարումները կատարել սահմանված գրաֆիկին համապատասխան՝ բացառելով ուշացումները և ցուցաբերելով պարտաճանաչ վարքագիծ, նվազեցնել տրված երաշխավորությունները՝ առկայության դեպքում վերացնելով այս մասով առկա ժամկետանցությունները:

Ձեր վարկային պատմության վերաբերյալ տեղեկատվությունն արտացոլվում է **վարկային զեկույց** փաստաթղթում, որը պարունակում է հարցմանը նախորդող վերջին 5 տարվա ընթացքում ֆինանսական հաստատությունների նկատմամբ Ձեր բոլոր վարկային պարտավորությունների, վերջիններիս գծով վճարումների, ուշացումների, սքոր գնահատականի, վարկային հարցումների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն:

Ձեր վարկային պատմությանը կարող եք ծանոթանալ www.acra.am կայքում:

Սխալ կամ թերի վարկային պատմություն

Եթե վարկային պատմության մեջ առկա են սխալ կամ թերի տվյալներ, ապա դրանց ուղղման կամ պարզաբանման նպատակով կարող եք դիմել կամ ԱՔՌԱ վարկային բյուրո, կամ անմիջապես տեղեկատվությունը ԱՔՌԱ փոխանցած ֆինանսական կազմակերպությանը:

ԱՔՌԱ վարկային բյուրո դիմելու դեպքում ընթացակարգը և մանրամասն նկարագիրը ներկայացված է նաև www.acra.am կայքում:

Եթե սխալ կամ թերի տեղեկատվությունն ԱՔՌԱ վարկային բյուրո փոխանցվել է Ակբա Լիզինգի կողմից, ապա կարող եք դիմել Ակբա Լիզինգին.

- Ընկերության պաշտոնական էլեկտրոնային հասցեին՝ leasing@acba.am, համապատասխան նամակ ուղարկելու միջոցով,
- Ընկերության հեռախոսային կենտրոն զանգահարելու միջոցով. +37410318888,
- Ընկերության գրասենյակ՝ ք. Երևան, Աջափնյակ, Յու. Ֆուչիկի 1/1 288-289 փարածքներ, գրավոր դիմում ներկայացնելու միջոցով:

Վարկային սքոր գնահատական և վերջինիս կարևորություն

Վարկային սքորը Ձեր ֆինանսական վարկանիշի կարևորագույն ցուցանիշներից է. այն հնարավորություն է տալիս ֆինանսական կազմակերպություններին վարկավորման գործընթացում գնահատելու հաճախորդի վարկային ռիսկի մակարդակը, կանխատեսելու պարտաճանաչության մակարդակը (բարձր սքոր գնահատականը վկայում է ցածր ռիսկի, պարտաճանաչության մասին, և հակառակը՝ ցածր սքորը վկայում է բարձր ռիսկի, պարբերաբար ուշացումների մասին):

Ակբա Լիզինգի կողմից լիզինգի տրամադրման որոշման կայացման հարցում կիրառվում են FICO սքոր և Ընկերության կողմից մշակված սքոր վերլուծական ձևը:

FICO սքորը Ձեր վարկային պատմության վերլուծության և վիճակագրական ուսումնասիրության արդյունքում հաշվարկված վարկային ռիսկի (վարկարժանության) թվային ամփոփ գնահատականն է, որը մշակվել և հաշվարկվում է ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ ՓԲ և Ֆեյր Այգաք Սերվիսիզ Լիմիթիդ ընկերությունների կողմից: FICO գնահատականը կարող է տատանվել 300-850 միջակայքում: Բարձր FICO գնահատականը վկայում է Ձեր վարկարժանության վերաբերյալ:

FICO սքոր գնահատականի ձևավորման վրա ազդող հիմնական գործոններն են.

- ✓ ստացված վարկերի տեսակները. տարբեր վարկատեսակներ (օրինակ, հիփոթեքային վարկ, վարկային գիծ, սպառողական վարկ) ունենալը կարող է դրական ազդել Ձեր սքոր գնահատականի ձևավորման վրա,

- ✓ հերթական մարումների պատմությունը. վճարումների գծով առկա ուշացումները կարող են բացասական ազդեցություն ունենալ սքոր գնահատականի ձևավորման վրա,
- ✓ վարկային ծանրաբեռնվածությունը. վարկային գերծանրաբեռնվածությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ սքոր գնահատականի ձևավորման վրա,
- ✓ վարկային պատմության երկարությունը. ավելի երկար վարկային պատմությունը կարող է դրականորեն ազդել Ձեր սքոր գնահատականի ձևավորման վրա,
- ✓ նոր վարկային դիմումների քանակն ու հաճախականությունը: Կարճ ժամանակահատվածում պարբերաբար վարկերի համար դիմելը կարող է բացասաբար ազդել Ձեր սքոր գնահատականի ձևավորման վրա (մոնիթորինգ իրականացնելու նպատակով հարցումները որևէ ազդեցություն չեն թողնում):

Դուք կարող եք բարելավել Ձեր ՖԱՅԿՈՎ վարկանիշը՝ կերպելով լավ վարկային պատմություն և հեղուկական լինելով, որպեսզի վճարումները կատարվեն ժամանակին, նվազեցվեն առկա, ինչպես նաև ժամկետանց վարկերի և երաշխավորությունների քանակը և գումարը:

FICO սքոր գնահատականի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը, ինչպես նաև գնահատականի ձևավորման վրա յուրաքանչյուր գործոնի ազդեցության չափը ներկայացված է նաև <https://acra.am/%d5%bd%d6%84%d5%b8%d6%80/> հղմամբ:

Ընկերության կողմից մշակված սքորը վարկունակության գնահատման համակարգ է:

Սքորինգային գնահատականի ձևավորման վրա ազդող հիմնական գործոններ.

- ✓ **Վարկային պատմությունը, գործող վարկերի քանակը և գումարը, վարկի ստացման համար դիմելու հաճախականությունը.** դրական վարկային պատմությունը կարող է նպաստել լիզինգի հաստատման հավանականության բարձրացմանը, իսկ լիզինգի ստացման համար կարճ ժամկետում պարբերաբար դիմելը (մոնիթորինգ իրականացնելու նպատակով հարցումները որևէ ազդեցություն չեն թողնում), վարկային ծանրաբեռնվածությունը, վճարումների գծով առկա ուշացումները կարող են բացասական ազդեցություն ունենալ սքոր գնահատականի ձևավորման վրա:
- ✓ **Զբաղվածություն և եկամուտ.** եկամտի և զբաղվածության կայունությունը կարևոր գործոն է: Կանոնավոր աշխատանք ունենալը կարող է նպաստել լիզինգի հաստատման հավանականության բարձրացմանը: Եթե Ձեր եկամուտը անկայուն է կամ չունեք կանոնավոր աշխատանք, ապա նշված իրավիճակը կարող է բացասաբար ազդել Ձեր լիզինգի հաստատման հավանականության վրա:
- ✓ **Աշխատանքային փորձ.** երկար տարիների աշխատանքային փորձը վկայում է Ձեր ֆինանսական կայունության մասին և կարող է նպաստել լիզինգի հաստատման հավանականության բարձրացմանը: Եթե Դուք ունեք կարճ աշխատանքային փորձ, ապա վերջինս կարող է բացասաբար ազդել Ձեր լիզինգի հաստատման հավանականության վրա:
- ✓ **Լիզինգի կանխավճարի չափ.** լիզինգի կանխավճարը արտահայտված տոկոսային մեծությամբ լիզինգի առարկայի գնի նկատմամբ կարևոր գործոն է: Մեծ կանխավճարի չափը տոկոսային արտահայտությամբ կարող է նպաստել լիզինգի հաստատման հավանականության բարձրացմանը: Կանխավճարի բացակայությունը կամ փոքր կանխավճարը կարող է բացասաբար ազդել Ձեր լիզինգի հաստատման հավանականության վրա:
- ✓ Հաճախորդին բնութագրող այլ տեղեկատվություն:

Այսպիսով, սքոր գնահատականը բարելավելու համար անհրաժեշտ է առաջին իսկ հնարավորության դեպքում մարել գործող ժամկետանց պարտավորությունները, թեթևացնել վարկային ծանրաբեռնվածությունը, հերթական մարումները կատարել սահմանված գրաֆիկին համապատասխան՝ բացառելով ուշացումները և ցուցաբերելով պարտաճանաչ վարքագիծ, նվազեցնել տրված երաշխավորությունները, առկայության դեպքում վերացնելով այս մասով առկա ժամկետանցությունները, խուսափել կարճ ժամանակահատվածում նոր վարկային դիմումներ ներկայացնելուց:

Վարկային պատմության վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն ներկայացված է նաև ներքոնշյալ հղումներով.

- <https://abcfinance.am/lifesituations/credit-history.html>
- <https://acra.am/%d5%af%d5%a1%d5%ba-%d6%87-%d5%a1%d5%bb%d5%a1%d5%af%d6%81%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6/%d5%b0-%d5%bf-%d5%b0/>

Սքոր գնահատականի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն ներկայացված է նաև ներքոնշյալ հղումներով.

- https://www.abcfinance.am/news/news_varkayinscore.html
- <https://acra.am/%d5%bd%d6%84%d5%b8%d6%80/>